

րամասի զանազան ցեղապետներուն, որոնք զանազան ժամանակներու մէջ անջատ իշխանապետութիւններ կազմած էին եւ անուանական կարեւորութիւն մը կուտային իմիրի գերագանցութեան: 1840-ական թուականներէն առաջ տեղի ունեցող զէպքերն ալ իրենց կարգին կուզային մղում տալու ազգային համերաշխութեան, կամ, առնուազն կարեւոր ուժերու կեդրոնացման՝ ընդդէմ թրքական վրտանդին:

Բէդիրխան բէյը նախ ամբացաւ Բոնթանի մէջ: Իր բանակը կազմակերպեց Բոնթանի քիւրդերէն եւ Դըհի հայերէն:

Դըհի հայկական շրջանը, մօտ 800 հայերով կ'իյնար Բոնթանի սահմաններուն մէջ: Այս կուռող հայերը Բէդիրխան բէյի աջ բազուկը կը հանդիսանային: Այսպէս, Բոնթանի իմիրը կը կազմէր հայ-քրդական խոռո բանակ մը, ու չբաւականանալով զուտ աշիրէթական այդ միութիւնով՝ կը ձեռնարկէր քաղաքական միութեան մը, որու մէջ պիտի մտնէին ոչ միայն քիւրդ իշխանապետները, այլ նաեւ հայութիւնը:

Ճիշդ է որ ձէգիրէի կամիրներէն ոմանց անունը ելած է որպէս աւազակներու. ճիշդ է նաեւ այն, որ Բէդիրխանը եղած է խստաբարոյ, հարուածող, գլխատող եւ թեւարկող իմիր մը: Սակայն, իմիր Բէդիրխանի խստութիւնները ու բռնութիւնները վերջին հաշուով կը ծառայէին քաղաքական մեծ ձեռնարկի մը՝ հայ-քրդական միութեան եւ այդ երկու երկիրներու անկախութեան:

Այս փոքրիկ գնահատականը անհրաժեշտ նկատեցի, տակաւին Բէդիրխան բէյի միութեան ձեռնարկներուն շանցած: Որովհետեւ այն, ինչ որ 90 տարի առաջ բռնութիւն, կողոպուտ եւ անիրաւութիւն կը նկատուէր, այսօրուան քաղաքական ակնոցով՝ քաղաքական հասունութիւն կը նկատուի:

* * *

Թրքական կառավարութիւնը, ինչպէս տեսանք նախորդ գործողութիւններէն, չկրցաւ վերջնականորէն ընկճել քրդական իշխանապետութիւնները: Ու նկատի առնելով որ եզիպտական յաջողութիւններէն յետոյ քրդական միացեալ ուժ մը կարող էր իր դէմ ցցուիլ,

ձեռք քաշեց զինուորական նոր առաքումներէն, ու դիմեց աւելի խորամանկ միջոցներու: Հետըզհետէ ներում չնորհեց շատ մը ցեղապետներուն, եւ անոնց տուաւ իշխանական տիպոսներ:

Այսպիսով, շարք մը շրջաններ, որոնք մէկ զօրաւոր ցեղապետի կ'ենթարկուէին, բաժնուեցան քանի մը ցեղապետներու միջեւ, որոնք իրենց նոր իրաւունքներէն ողեւորուած, մէկը միւսի դէմ կը լարուէին: Այս շատ լաւ լարուած դաւադրական ցանցը իրական շահ մը կ'ապահովէր թրքական կառավարութեան, որ ինքզինքը սկսած էր ապահով զգալ քրդական նոր բռնկումներէն:

Սակայն, եթէ թուրք կառավարութեան ապահովութիւնն երաշխաւորուած կը թուէր զանազան նահանգներու մէջ, նոյն բանը տեղի չունեցաւ բուն Քիւրդիստանի մէջ: Թէեւ թուրք կառավարութիւնը մեծ խնամքով կրցած էր բազմաթիւ մասերու բաժնել Բոնթանի եւ Հէքեարիի միացեալ շրջանները. օրինակ, Բոնթանի, Չախօի, Ամատիաի, Հէքեարիի, Սուլէյմանիէի փաշայութիւնները: Կար նաեւ ձուլամերկի ասորիներու կէս անկախ շրջանը:

Բուն Քիւրդիստանի մէջ զօրացած Բէդիրխանը, սովորական աշիրէթական կոիւններու եւ կողոպուտներու փոխարէն, իր հաւատարիմ բանակը գործածեց նախ եւ առաջ իրեն ենթարկելու Բոնթանի շրջակայ փաշայութիւնները: Շատերն ստիպուեցան տեղի տալ զերազանց ուժին, շատերը առանց կուռի համաձայնութեան եկան Բոնթանի իմիրին հետ, դաշնակից ուժ մը դառնալով անոր:

Այսպիսով, Բէդիրխանի իմիրութեան դաշնակից դարձան ձէգիրէի, Չախօի, Ամատիաի, եւ Հէքեարիի պետերը, որոնք մօտաւոր կամ հեռաւոր աղդակցական ու խնամիական կապեր ունէին Բէդիրխան բէյի տան հետ:

Ուժերու այս հաւաքումէն յետոյ, Բէդիրխան բէյը իր ուշադրութիւնը դարձուց ձուլամերկի եւ անկէ հիւսիս ինկնող ասորական անկախ բերդերու վրայ, որոնք կրցած էին դիմադրել Հէքեարիի իմիրին: Գժբախտաբար, ոչ Բէդիրխանը եւ ոչ ալ ասորիները քաղաքական վայրկեանը հասկցան՝ փոխադարձ համերաշխութեան մը գալու եւ գործելու ընդդէմ